

Արձանագրություն թ.1

(ժողովը գումարվել է 2013թ սեպտեմբերի 14-ին)

Համադպրոցական ծնողական ընդհանուր ժողովին մասնակցում են՝ 205 ծնող:
Խորհրդակցական ձայնի իրավունքով ներկա են նաև տնօրեն՝ Ա. Խոսրովյանը և փոխտնօրեն
Կ. Ղազարյանը:

Օրակարգում՝

1. Տնօրենի ելույթը <<Բարերարի օր>>միջոցառման նախախապատրաստական աշխատանքների մասին:
2. 2013-2014 ուստարվա համադպրոցական, ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանի (զեկուցող՝ տնօրեն՝ Ա. Խոսրովյան) քննարկում:
3. Ծնող խորհրդի իրավունքների և պարտականությունների քննարկում և ծանոթացում
4. Ընթացիկ հարցեր:

Որոշումներ

1. Աջակցել կայանալիք միջոցառուման կազմակերպմանը:
2. Հավանություն տալ 2013-14 ուստարվա համադպրոցական :
3. ուսումնադաստիարակչական պլանի նախագծին, տնօրինության ներդրած նոր մեթոդներին և ծրագրերին:
4. Հանձնարարել ծնողխորհրդի նախագահներին իրենց դասարանում ծնողներին ծանոթացնել իրենց իրավունքների և պարտականությունների հետ:
5. Ձեռք բերել թատրոնի տոմսեր, կազմակերպել ուխտագնացություններ, այցելություններ թանգարաններ :
6. Ձեռք բերել նախարարության կողմից երաշխավորված թեմատիկ գրավոր աշխատանքների տետրեր:

Ծնողական խորհրդի նախագահ՝ Լ. Միրզոյան

Քարտուղար՝ Տ. Բոյախյան

Արձանագրություն թ.2

(Ժողովը գումարվել է 10.12.2013թ)

Համադպրոցական ծնողական ընդհանուր ժողովին մասնակցում են՝ 103 ծնող:
Խորհրդակցական ձայնի իրավունքով ներկա են նաև տնօրեն՝ Ա. Խոսրովյանը և փոխտնօրեն
Կ. Ղազարյանը:

Օրակարգում՝

1. «Բարերարի օր» միջոցառման կազմակերպչական հարցերի և հրավիրվող հյուրերի ցանկի մասին:
2. Ամանորյա միջոցառումների երեխաների նվերների և ամանորյա թատրոնի տոմսերի մասին :
4. Կիսամյակի ավարտի մասին:
5. dasar.am-ի կողմից հայտարարած «Շենքի ներքին և արտաքին զարդարման մրցույթ»-ի մասին:

Որոշեցին՝

Շնորհակալական նամակ գրել հովանավոր շրջանավարտներին, իսկ արտերկրում գտնվող հովանավորներին շնորհակալություն հայտնել էլեկտրոնային տարբերակով:

Բարձր դասարանից ընտրել Ձմեռ Պապ, որը կուրախացնի երեխաներին տարական դպրոցում նվերներով, այն չպետք է գերազանցի 500 դր-ից և պատրաստ լինել հաջորդ օրվա միջոցառմանը՝ յուրաքանչյուր դասարանից 3-ական ծնողի ներկայությամբ ;

Կազմակերպել տոնաձառի միջոցառման տոմսերի ձեռքբերում :

Աջակցել և օգնել ձայներով առաջին տեղը գրավելու համար:

Ծնողական խորհրդի նախագահ՝ Լ. Միրզոյան

Քարտուղար՝ Տ. Բոյախյան

